ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԴԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Եթե աշխարհի քարտեզի վրա էլեկտրական լույսով նշվեին այն բոլոր քաղաքներն ու բնակավայրերը, ուր անցյալներում գործել են և այժմ շարունակում են գործել հայ մշակութային և հայրենակցական միությունները, ապա մեր հայացքի առաջ կերևային հարյուրավոր լուսավոր կետեր՝ Ամստերդամ, Վենետիկ, Վիեննա, Նոր Ջուղա, Կալկաթա, Կահիրե, Մոսկվա, Թիֆլիս, Բաքու —այս և բազմաթիվ այլ վայրերում անցյալի հայ մշակույթի գործիչները տպագրել են պարբերաթերթեր, գրքեր, հայոց պատմության, գրականության ու արվեստի վերաբերյալ ծանրակշիռ ուսումնասիրություններ։ Ստեղծել են միություններ և անվանել «Կրթասիրաց», «Դպրոցասիրաց», «Գեղարվեստասիրաց», տվել նրանց բնաշխարհի լեռների, քաղաքների կամ դաշտավայրերի անուններ՝ «Մասիս», «Անի», «Վասպուրական», «Շիրակ», «Երևան», ստեղծել են երգչախմբեր ու կոչել «Կոմիտաս», «Եկմալյան», դպրոցներ՝ «Մեսրոպյան», «Սահակյան», «Ռաֆֆի», «Թեքեյան» և այլն։ Ամեն տեսակ մեծ ու փոքր միությունների ընդգծված «առատությունը» ազգային շքեղության արդասիք չէր, անշուշտ, այլ ազգային ճակատագրի հետ սերտորեն կապված մի երևույթ։ Եթե դու չունես սեփական պետություն, որ հովանավորի քո մշակույթը, նյութական ու բարոյական նեցուկ կանգնի նրա մշակներին, եթե այդ մշակներն իրենց ժողովրդի հետ ցրված են ամբողջ աշխարհով մեկ և եթե այդ արտասովոր դժվարին պայմաններում դու ուզում ես ոչ միայն պահել նախկինում ստեղծվածը, այլև զարգացնել այն, հարստացնել նոր արժեքներով, ապա մնում է միայն մի ելք՝ հաղթահարել նյութական, բարոյական և այլ կարգի դժվարություններ, ի մի հավաքել գրչի, վրձնի և հոգևոր մշակույթի մյուս ասպարեզների մարդկանց, կազմել միություններ, բացել դպրոցներ ու ակումբներ, ստեղծել հայրենակցական միություններ և պահել ու զարգացնել հայրերի թողած հոգևոր ժառանգությունը։

1915—1922 թթ. ընթացքում Արևմտյան Հայաստանին վիճակված ողբերգությունը, բնականաբար, սփյուռքահայության առաջ անհետաձգելի պահանջ առաջադրեց ոչ միայն պահել նախորդ շրջանում եղած մշակութային և հայրենակցական միությունները, այլև ստեղծել նորերը, որոնց առաջ ծառացած խնդիրները շատ ավելի բարդ էին ու դժվարին, քան նախորդ շրջանում։

Ներկա հոդվածի նպատակն է ամփոփ տեղեկություններ տալ արդի շրջանում գործող սփյուռքահայ մշակութային ու հայրենակցական միությունների գործունեության մասին։

* * *

Ասիայի, Եվրոպայի ու Ամերիկայի կապիտալիստական մեծ քաղաքներում, ուր հայությունը էթնիկական ամբողջություն ներկայացնելով հանդերձ ապրում է ցրված, հայ մշակութային միությունները մշտական կապ են պահպանում սփյուռքահայ լայն զանգվածների և մայր հայրենիքի հետ, ապրում նրա առօրյայով և տարածում հայ մշակույթի նվաճումները սփյուռքում։

Բացառիկ կարևորություն ունի մշակութային կազմակերպությունների գործունեությունը ֆրանսահայ գաղութում։ Ասում ենք բացառիկ, աչքի առաջ ունենալով այն հանրահայտ իրողությունը, որ այստեղ հայապահպանման հարցը դրված է առանձին սրությամբ, և մենք գործ ունենք մի գաղութի հետ, որտեղ չկան հայկական դպրոցներ, որտեղ երիտասարդ սերընդի շրջանում մշակութային գործունեության ծավալումը չափազանց կարևոր գործ է։ Այդ իմաստով դժվար է գերագնահատել ֆրանսահայ մշակութային միության և ֆրանսահայ երիտասարդական միության կողմից մշտապես տարվող աշխատանքը։ Չափազանց լայն է այն հարցերի ու խնդիրների շրջանակը, որոնցով զբաղվում է ֆրանսահայ մշակութային միությունը, որը ստեղծվել է 1949 թ.։ Միության գործունեության մեջ մեծ տեղ են գրավում այն միջոցառումները, որոնց նպա-

---

1 *Տե՛ս, օրինակ, «Սևան», 1961, 22 մարտի։*

տակն է ամրապնդել ու ընդլայնել մշակութային կապերը հայ և ֆրանսիական ժողովուրդների միջև, բոլոր հնարավոր միջոցներով նպաստել երկու ժողովուրդների ստեղծած մշակութային արժեքներին փոխադարձորեն ծանոթացնելու գործին։ Այս տեսակետից գործունեության լայն ասպարեզ կա, աչքի առաջ ունենալով երկու ժողովուրդների միջև եղած դարավոր կապերը։ Սերտորեն համագործակցելով «Եորոպա» տարեգրքի հետ, միությունը ֆրանսիական հասարակայնությանն է ներկայացնում հայ դասական և ժամանակակից գրականության ընտիր գործերը, պարբերաբար կազմակերպում է գրքի փառատոներ, որոնց ընթացքում ցուցադրվում ու վաճառվում են ֆրանսիական հեղինակների հայերեն թարգմանությունները, ինչպես նաև սովետահայ հրատարակություններ։ Դեռևս 1961 թ. «Աշխարհ» թերթը գրել է. «...Թող մեր մամուլը խաղաղություն սերմանելու ատակ դառնա, մեր գրքերը դառնան ավելի բեղմնավոր, մեր հատորները թող հետաքրքրքրեն միջազգային բազմություններ, մեր արվեստագետները դառնան հետզհետե ավելի մեծ, մեր գիտունները աշխարհներ լուսավորեն, ցնծա մեր հայրենի հողը, իր վերելքի ցնծումով խայտա բնիկ ժողովուրդը ու մենք հեռվեն հպարտանանք իրմով, վերանանք ու երջանկանանք, ի տես անոնց վերելքի ոսկեղեն հունձքին»[2]։

Նույն նպատակին են ծառայում պարբերաբար կազմակերպվող դասախոսությունները՝ նվիրված ֆրանսիացի և հայ հայտնի գրողներին։ Միությունը շնորհակալ աշխատանք է կատարում ֆրանսիական ժողովրդին Սովետական Հայաստանի նվաճումներին ծանոթացնելու գործում։ Հատկապես վերջին տարիների ընթացքում միությունը մեծ աշխատանք կատարեց Հայաստանի արվեստի ու մշակույթի ներկայացուցիչներին Ֆրանսիա հրավիրելու, Փարիզում և երկրի այլ վայրերում Հայաստանից ժամանած համերգային խմբերի ելույթների կազմակերպման ուղղությամբ։ Միության ջանքերով գաղութում նշվեցին Մեսրոպ Մաշտոցի, Հովհաննես Թումանյանի, Երևանի հիմնադրման հոբելյանները։ Եթե մեր ասածին ավելացնենք այն շնորհակալ աշխատանքը, որ միության գործիչները կատարում են տուրիզմին նպաստելու, հայ մշակութային արժեքները Հայաստան փոխադրելու ուղղությամբ, ապա պարզ կդառնա միության գործունեության շրջանակների լայնությունը։ Անհրաժեշտ ենք համարում հատկապես ընդգծել, որ միությունը սիրահոժար իր մասնակցությունն է բերում այն միջոցառումներին, որոնք իրականացվում են Ֆրանսիայի և Սովետական միության միջև մշակութային կապերի մերձեցման ուղղությամբ[3]։ Ֆրանսահայ մշակութային միության ակտիվ գործիչներից են Ա. Դարբինյանը, Ռ. Քերեսթեջյանը, Ա. Ալեքսանյանը, Մ. Մավյանը, Հ. Վեզիրյանը, Դ. Ճիզմեճյանը և ուրիշներ։ Միության գործունեությունը լայնորեն լուսաբանում է Փարիզում հրատարակվող «Աշխարհ» թերթը։

Գաղութի մյուս մասսայական կազմակերպությունը ֆրանսահայ երիտասարդական միությունն է, որը հայտնի է ԺԱՖ անունով և սփյուռքի ամենաճանաչված երիտասարդական կազմակերպություններից մեկն է։ Որ մեջ միավորելով Փարիզի և երկրի այլ քաղաքներում ապրող հայրենասեր երիտասարդությանը, ԺԱՖ-ը իր 25-ամյա գործունեության ընթացքում նախաձեռնողն ու իրականացնողն է եղել շատ կարևոր միջոցառումների։ Տոգորված նույն նպատակներով ու գաղափարներով, որոնցով առաջնորդվում է մշակութային միությունը։ ԺԱՖ-ը իր գործունեությունը ծավալում է հատկապես ֆրանսահայ երիտասարդության շրջանում։ Պետք է նկատի առնել, որ ֆրանսահայ գաղութի պայմաններում հայ երիտասարդների մի զգալի մասը մայրենի լեզվին չի տիրապետում, երևույթ, որը ծնունդ է կյանքի օբյեկտիվ օրինաչափությունների։ Մեծ եղեռնից հետո ընկած ժամանակաշրջանում սփյուռքում այժմ հասակ է առնում արդեն երրորդ սերունդը։ Առաջին սերնդի համար լեզվի խնդիր գոյություն չուներ։ Թեև մարդիկ սեփական աչքերով տեսել էին ահավոր ողբերգությունը, կորցրել իրենց հարազատներին, զրկվել ամեն ինչից և ցրվել աշխարհի չորս կողմ, բայց նրանք իրենց հետ տարել էին այն, ինչ չէին կարող չտանել՝ իրենց ազգային լեզուն, ավանդությունները, այն ամենը, ինչ բնորոշվում է որպես ազգային նկարագիր։ Հայրենիքը նրանց համար հեռավոր հուշ չէր, այլ կոնկրետ գիտակցություն իր բազմապիսի արտահայտություններով։ Երկրորդ սերընդի կյանքը մեծապես անցել է հայրերի ու մայրերի հոգեկան ազդեցության պայմաններում և առավելապես հայկական գաղութային կյանքի ոլորտներում, այսպես կոչված հայկական կյանքի միկրոկլիմայում։ Այլ ճակատագիր է վիճակվել երրորդ սերնդին։ Սփյուռքում այժմ տեղի ունեցող ձուլման պրոցեսը իր հորձանուտի մեջ է առել առաջին հերթին հենց հայ երիտասարդությանը։ Եվ չնայած դրան, գուցե թերևս նաև այդ պատճառով, ֆրանսահայ երի-

2 «Աշխարհ», 1961, 13 մայիսի։

3 «Սովետական Հայաստան» ամսագիր. 1969, № 9, էջ 23—24։

տասարդությունը աշխույժ հետաքրքրություն է ցուցաբերում իր վերածնված հայրենիքի նկատմամբ, ապրում է նրա առօրյայով և հպարտանում նրա հաջողություններով։ ԺԱՖ-ի երիտասարդ, հայրենասեր գործիչներին լավ է ճանաչում Հայաստանի երիտասարդությունը։ Շատ անգամ են նրա ղեկավարները առանձին կամ պատվիրակությունների կազմում հյուրընկալվել Հայաստանում և իրենց մոտ՝ Ֆրանսիայում ընդունել Հայաստանի երիտասարդության ներկայացուցիչներին։ ԺԱՖ-ի երիտասարդ էնտուզիաստները Փարիզում, Մարսելում, Վալանսում, Լիոնում և մյուս բնակավայրերում եռանդուն աշխատանք են տանում հայոց լեզվի ուսումնասիրության, հայկական երգերի ու պարերի տարածման գործում։ Միությունը ֆրանսերեն լեզվով հրատարակում է «Նոթր վուա» («Notre voix») պարբերաթերթը, որի էջերում լուսաբանվում են ֆրանսահայ երիտասարդությանը հուզող հարցերը։ ԺԱՖ-ի գործունեությունը չի սահմանափակվում զուտ հայկական միջավայրով։ Կազմակերպությունը լավ է գիտակցում, որ իր գլխավոր խնդիրներից մեկը հայ և ֆրանսիական երիտասարդության ինտերնացիոնալ կապերի ամրապնդումն է և Հայաստանից ժամանող երիտասարդական պատվիրակությունների, համերգային և սպորտային խմբերի նպատակներից մեկն էլ այդ է։ Հենց այդպես էլ գնահատեց նա Հայաստանի պարային խմբի այցելությունը Ֆրանսիա, որը տեղի ունեցավ անցյալ տարվա հոկտեմբերին։ Այդ միջոցառումը իրականացրել էր Ֆրանսիա—Սովետական Միություն կուլտուրական կապերի ընկերությունը, որի նպատակն ու առաքելությունը «Նոթր վուա» թերթի բնորոշմամբ ուղղված է «Սովետական Միության և Ֆրանսիայի ժողովուրդների փոխըմբռնմանը, բարեկամությանն ու մերձեցմանը»[5]։ Ամեն տարի Փարիզի հայ հասարակայնությունը նշում է Հայաստանում սովետական կարգերի հաստատման տարելյանը, որին իրենց մասնակցությունն են բերում Ֆրանսիայի անվանի մտավորականներ և պետական գործիչներ։ Տոնակատարությունների կազմակերպման հետ կապված միջոցառումներին իր մասնակցությունն է բերում ԺԱՖ-ը։ Այդ իրադարձությանը նվիրված առաջնորդող հոդվածում թերթը ամփոփ գծերով տալիս է Հայաստանի և հայ ժողովրդի անցած դժվարին ուղին, մի ուղի, որը սփռված չէր վարդերով, այլ լի էր անվերջանալի ազգային ողբերգություններով։ Եվ այժմ, ազգային վերածննդի ու աննախընթաց զարթոնքի այս շրջանում, ֆրանսահայ երիտասարդությունը խոր գիտակցությամբ է ընկալում Սովետական Հայաստանի նվաճումների չափանիշներն ու նշանակությունը։ «Եթե այսօր Վիկտոր Համբարձումյանը,— գրում է թերթը,— աստրոֆիզիկայի ասպարեզում կատարած իր հետազոտություններով ճանաչված ու հարգված է ամբողջ աշխարհում, եթե այսօր հայկական հաշվիչ էլեկտրոնային մեքենաները Լայպցիգի միջազգային տոնավաճառում ոսկե մեդալ են շահում, եթե այսօր արդյունաբերական արտադրանքի հարյուրավոր տեսակներ առաքվում են աշխարհի տարբեր երկրներ, դա նշանակում է, որ փոքրիկ Հայաստանը քայլում է «Մեծերի» քայլերով»[6]։

1947 թ. Բեյրութում ստեղծվեց հայ անվանի բանաստեղծ Վահան Թեքեյանի անունը կրող մշակութային միությունը։ Թեքեյան մշակութային միության նպատակներն ու խնդիրները շարադրված են հասարակական գործիչ Հովհաննես Թապագյանի հոդվածում, որը գրում է. «Շատ հստակ է եղած միության ծրագիրը. սիրել Հայրենիքը և հայ մշակույթը. ծառայել հայ ժողովուրդին՝ մշակույթի ճամփով. սիրել լիբանանյան (կամ սուրիական) հայրենիքը. կամուրջ ըլլալ արաբ և հայ մշակութային գործակցության»[7]։ Այժմ այն ձեռք է բերել սփյուռքի առավել աղդեցիկ ու մասսայական կազմակերպության համբավ։ Ամենօրյա աշխույժ կյանքով է ապրում միությունը, սատարելով հայ գրականության, երաժշտության, կերպարվեստի մշակներին, օգնելով հայկական դպրոցներին բարոյապես ու նյութապես։ Թեքեյան մշակութային միությունը շնորհակալ աշխատանք է կատարում հայրենիքի և լիբանանահայ դաղութի միջև մշակութային կապերը ընդլայնելու ուղղությամբ։ Հանդիսանալով ամենահայահոծ դաղութներից մեկը, Լիբանանի հայ համայնքը նոպատեր-բաղմյան շրջանում հյուրընկալեց Հայաստանից ժամանած երաժշտական ու թատերական կոլեկտիվների, գիտնականների, գրողների և մշակութային այլ գործիչների։ Միությունը իր մասնաճյուղերն ունի Սիրիայում, Արգենտինայում, Կանադայում և այլ երկրներում։ Այս հանգամանքը կարևոր նշանակություն ունի միջազգութային կապերի ամրապնդման գործում, իսկ այդ կապերի անհրաժեշտությունը սփյուռքահայ կյանքի յուրահատուկ պայմաններում կենսական անհրաժեշտություն է։ Կանադայի մասնաճյուղը ստեղծվեց 1968 թ.։

Լիբանանի մայրաքաղաքի մշակութային կյանքում լուրջ դեր ունեն «Նոր սերունդ» և «Գրական

---

4 «Բյուրակն», 1962, № 1, հունվար։

5 «Notre voix», 1969, նոյեմբեր։

6 «Notre voix», 1969, նոյեմբեր։

7 «Զարթոնք բացառիկ», Բեյրութ, 1962, էջ 344։

շրջանակ» միությունները, որոնց գործունեությանը իրենց ակտիվ մասնակցությունն են բերում գաղութի շատ անվանի մտավորականներ և երիտասարդ խոստումնալից ուժեր։ Գրողների, բանաստեղծների, հրապարակախոսների ելույթները միշտ անցնում են հետաքրքիր և բովանդակալից։ Հիշատակված զույգ կազմակերպությունները սերտ կապերի մեջ են հայրենիքի գրականության ու մշակույթի գործիչների հետ։ «Նոր սերունդ» և «Գրական շրջանակ» միությունների ջանքերով հրատարակվել են սփյուռքահայ գրողների մի շարք ստեղծագործություններ։ Մեր ժամանակներում, երբ Սովետական Միության և արաբական երկրների ժողովուրդների միջև ստեղծվել են սերտ բարեկամական հարաբերություններ, մեծ նշանակություն է ստանում հիշատակված երկրներում ապրող հայերի և արաբների միջև վաղուց հաստատված կապերի հետագա ամրապնդումը։ Իրենց աշխատանքներում «Նոր սերունդ» և «Գրական շրջանակ» միությունները դրան առանձնահատուկ տեղ են հատկացնում, կարևոր միջոցառումներին մասնակից դարձնելով արաբական մտավորականության ներկայացուցիչներին։

Մոտ քսանվեց տարվա կյանք ունի ամերիկահայ առաջադիմական միությունը, որը սփյուռքի ամենահայահոծ գաղութի ճանաչված ու հեղինակավոր կազմակերպություններից մեկն է։ 1944 թ., երբ պատերազմը մտել էր իր ավարտական փուլի մեջ, ամերիկահայ առաջադիմական միությունը հստակորեն շարադրեց իր խնդիրներն ու նպատակները՝ բոլոր միջոցներով զորավիգ կանգնել ամերիկահայ մշակույթի զարգացմանը, նպաստել հայ զանգվածների և ամերիկյան ժողովրդի միջև ստեղծված կապերի մերձեցմանը, մշակութային կապեր հաստատել մայր հայրենիքի հետ և այդ միջոցով ամերիկահայ ժողովրդին ծանոթացնել Սովետական Հայաստանի նվաճումներին։ Միությունը միշտ հանդես է եկել հանուն ամերիկյան ժողովրդի հետ համերաշխության, հանուն երկրի առաջադիմական ուժերի հետ համատեղ պայքարի, որն ուղղված է խաղաղության ու ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը[8]։ Միաժամանակ միությունը իր կենսական խնդիրներից մեկն է համարել գաղութի բոլոր հայրենասիրական ուժերի համախմբումը, հայ համայնքի ներսում տեղ գտած վնասակար, անսկզբունք վեճերի վերացումը[9]։ Ամեն տարի ամերիկահայ գաղութը՝ առաջադիմական միության նախաձեռնությամբ, նշում է Հայաստանում սովետական կարգերի հաստատման տարեդարձը։ Այդ բախտորոշ թվականը նշվում է այն գիտակցությամբ, որ «եթե Հոկտեմբերը ծնունդ առած չըլլար իր նոր հասարակարգով, մենք չէինք տեսներ նոյեմբերն իր կենսատու արևով։ Եվ առանց անոնց ոչ միայն հիշված և մեր բոլորին ծանոթ շատ ավելի թըվով բարիքները չէինք վայելեր, այլև հայոց ազգն ու հայրենիքը գոյություն ունենալե դադրած կըլլային և հայ ժողովուրդը մատնված կըլլար հին Ասորեստանի, Փյունիկի, Ամերիկյան հնդիկներու և ինկաներու անփառունակ և ցավալի բախտին»[10]։

Հանրահայտ է, թե միջազգային կյանքը, մասնավորապես սովետա-ամերիկյան հարաբերությունները նախապատերազմյան տարիներին ինչ բարդ ուղիներով անցան։ Ամերիկյան կառավարող շրջանների կողմից հռչակված «սառը պատերազմի» քաղաքականությունը խոչընդոտում էր ամերիկահայ մշակութային կազմակերպությունների գործունեությանը հատկապես հայրենիքի հետ կապեր ստեղծելու ասպարեզում։ Բայց նույնիսկ այդ ծանր տարիներին միությունը չթուլացրեց իր ջանքերը և մնաց հավատարիմ իր հռչակած սկզբունքներին[11]։ Հետագա շրջանում, երբ «սառը պատերազմի» քաղաքականության սնանկացումն ակնհայտ դարձավ, երբ Սովետական Միության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև որոշ չափով աշխուժացան մշակութային ու գիտական կապերը, առաջադիմական միությունը շնորհակալ աշխատանք կատարեց և՛ գաղութի ներսում՝ ամեն կերպ զարկ տալով հայապահպանմանն ուղղված միջոցառումների իրագործմանը, և՛ Սովետական Հայաստանի հետ մշակութային կապերի ընդլայնման, տուրիզմի զարգացման, հայրենիքի նվաճումների հետ ամերիկահայությանը ծանոթացնելու ուղղությամբ։ Գնալով աճեց միության հեղինակությունը ամերիկահայ գաղութում։ Այժմ միության շուրջը համախմբված են հազարավոր անդամներ ու համակիրներ։ Միությունը սերտ կապ է պահում ամերիկահայ հայրենակցական միությունների և առաջադիմական մյուս կազմակերպությունների հետ։

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում պոլսահայ մշակութային միությունների արդի վիճակը, նրանց գործունեության ուղղությունն ու տարողությունը, միշտ աչքի առաջ ունենալով գաղութի յուրահատուկ պայմանները։ Ստամբուլի հայ մամուլը, առաջին հերթին «Ժամա-

8 Տե՛ս Մ. Մարտենց, Պատերազմը և հայերը, Նյու-Յորք, 1941, էջ 30։

9 Տե՛ս նույն տեղում։

10 «Լրաբեր», 1963, 26 հունվարի։

11 Տե՛ս Լևոն Մարտիրոսյան, Կյանքի մը ալպոմը, Բեյրութ, 1959, էջ 419։

նակ» և «Մարմարա» թերթերը հաճախ են անդրադառնում քաղաքի մշակութային միությունների վիճակին։ Ասում ենք քաղաքի, որովհետև Ստամբուլից դուրս Թուրքիայում հայ մշակութային կյանքը իսպառ բացակայում է։ Դատելով նույն այդ մամուլի նյութերից, կարելի է եզրակացնել, որ այժմ մշակութային կյանքը հիմնականում ընթանում է այսպես կոչված «սանուց միությունների» շրջանակներում։ Այդ միությունները, որոնք ներկայացնում են քաղաքի կրթական հաստատությունները, ժամանակ առ ժամանակ կազմակերպում են հանդիպման երեկոներ, հանդեսներ, դասախոսություններ, համերգներ և այլն[12]։ Բացի սանուց միություններից, գաղութում «գործում են ուսուցչաց միությունը, ուսուցչաց հիմնարկ մը և մշակութային թատերասիրաց միությունը, որոնք հաճախ ներդաշնակ գործակցությամբ մը իրենց աշխատանքները կմիացնեն իրարու և կներկայանան հասարակության հավաքական գործով, զանազան առիթներով»[13]։ Ամենայն խրախուսանքի են արժանի գաղութի հայ մըտավորականության ամենօրյա ջանքերը հայ մշակույթի ջահը վառ պահելու մի քաղաքում, որը ժամանակին եղել է հայ մշակույթի մեծ կենտրոններից, ուր ծաղկել են հայ գրականությունը, արվեստը, հրապարակագրությունը և մշակույթի մյուս ճյուղերը, քաղաք, ուր ապրել ու գործել են հայ ժողովրդի պարծանքը կազմող անուններ՝ Հակոբ Պարոնյանը, Երվանդ Օտյանը, Գրիգոր Զոհրապը, Դանիել Վարուժանը, Սիամանթոն, Պետրոս Դուրյանը և շատ ու շատ պայծառ անուններ։ Այժմ այլ են պայմանները, այլ է վիճակը։ «Կտեսնենք, —գրում է գաղութի ճանաչված հասարակական գործիչ Մկրտիչ Շելենֆյանը, — որ իսթամպուլահայությունը, որ ատենոք եղած էր բոլոր գաղութներու լուսարձակը, այսօր իր առջև ունի անհամար խնդիրներ։ Մտահոգիչ է պատկերը։ Ի՞նչ պիտի ընենք ուրեմն, լսինք, անցնենք ու չքանանք, թե ոչ մեր նախնիներու ձգած ժառանգությունը ջանանք ներկա բարդ ու հետզհետե ծանրացող պայմաններու մեջ հավերժանել, զարգացնել»[14]։ Գաղութի յուրահատուկ պայմաններում մշակութային և մյուս կազմակերպությունները մեծ ուշադրություն են դարձնում դպրոցներին, որոնց վիճակը մխիթարական լինելուց շատ է հեռու։ Ահա թե ինչպես է նկարագրում այդ վիճակը «Երջանիկ» տարեգիրքը. «Մեր ուսուցիչները զոհողությունների հանդիպելով, կշարունակեն կրթական իշխանության կրթական ծրագիրը իրագործելու իրենց կենսական գործը։ Բայց այդ աշխատանքը կըկատարվի կրթական մշակներուն նյութական ծյուրումին կամ իրենց զարմանալի սակավապետության գինովը։ Ու ասոր պատճառն այն է, որ չունենք տակավին բոլոր դպրոցներուն համար որոշված վարձատրության համեմատական ընդհանուր և պարտադիր չափ մը... չորս տարիներե ի վեր սեղանի վրա կմնա հայերեն դասագիրք պատրաստելու հարցը, իսթամպուլահայ մեր վարժարաններուն համար»[15]։ Գաղութի մշակութային կյանքի վրա խիստ բացասաբար է անդրադառնում Սովետական Հայաստանի հետ կապերի գրեթե բացակայությունը, եթե չհաշվենք տուրիզմը, որը վերջին տարիներին որոշ աշխուժացում է ապրում։ Եվ հենց այս գաղութի օրինակը ամբողջ ուժով ընդգծում է Սովետական Հայաստանի և սփյուռքի միջև ստեղծված մշակութային կապերի կենսական նշանակությունը։ Ստամբուլի հայ գաղութի մշակութային կյանքի վիճակի մասին տեղեկությունների կարելի է հանդիպել նաև սփյուռքահայ մամուլի օրգաններում։ «Սեվան» թերթում հրապարակված հոդվածում նշվում է, որ «Սանուց միությունները կհրապարակեն գրքեր, պարբերականներ, կկազմակերպեն երեկույթներ, ներկայացումներ, դասախոսություններ, որոնց շարքին մանկավարժական դասախոսություններ։ Երբեմն միասնաբար կկազմակերպվին հանդիսություններ, ինչպես Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի, Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակի առթիվ։ Կենտրոնական սանուցի նախաձեռնությամբ կազմակերպված են նկարչական ցուցահանդեսներ, որոնց մասնակցած են Կենտրոնականի, Դպրևանքի, Եսայանի, Մխիթարյանի, Պեզեճյանի, Ֆերիգյուղի, Գարակեոզյանի աշակերտները»[16]։

«Աշխարհ» թերթի տվյալներով, «հակառակ տնական արտագաղթին, դարձյալ Պոլսո ազգային կյանքը զոհացուցիչ վիճակ մը ունի... Պոլսահայության մնացորդացը, անտրտունջ, տարեկան տասը միլիոնե ավելի (5 միլիոն նոր ֆրանկ) զոհողություն կ'ընե իր հաստատությունները կանգուն պահելու համար։ Հայ վարժարաններուն մեջ կ'ուսանին 10 հազարի մոտ աշակերտներ, 350 հայ ուսուցիչներով»[17]։

Մշակութային աշխատանքի երկարամյա փորձ ունի հայկական հին գաղութներից մե-

---

12 Տե՛ս «Ժամանակ», 1969, 6, 10, 11, 12 նոյեմբերի։

13 Տե՛ս նույն տեղում, 6 նոյեմբերի։

14 «Մարմարա», 1969, 4 դեկտեմբերի։

15 «Երջանիկ», տարեգիրք, 1957, էջ 5—6։

16 «Սեան», 1969, 1 հոկտեմբերի։

17 «Աշխարհ», 1969, 25 հոկտեմբերի։

կը՝ եգիպտահայ գաղութը։ Հայ համայնքի առավել աչքի ընկնող կազմակերպություններից է Կահիրեի գեղարվեստասիրաց միությունը և Ալեքսանդրիայի «Տիգրան Երկաթ» հայ մշակութային միությունը։ Առաջինը կազմակերպվել է 1920 թ. և արդեն հիսնամյա կենսագրություն ունի։ Միությունն ունի թատերախումբ, երգչախումբ, բավականաչափ մասսայական բնույթ է կրում գեղարվեստական ինքնագործունեությունը, սակայն վերջին տարիներին ծայր առած արտագաղթը բացասաբար է անդրադարձել եգիպտահայ մշակութային կյանքի վրա։ Ալեքսանդրիայի «Տիգրան Երկաթ» միությունը կազմակերպվել է 1902 թ.։ Միության գլխավոր նպատակն է. «ա. աղեքսանդրիահայ գաղութին միջև մտավորական ու բարոյական կապերը ամրապնդել և հայությանը միշտ մոտ պահել մայր հայրենիքին. բ. փրկել այլասերման վտանգեն նորահաս երկսեռ երիտասարդությանը, առիթը ընծայելով անոր օգտվելու շահեկան և շինիչ դասախոսություններեն ու բանախոսություններեն, գրական գեղարվեստական հավաքույթներեն, վրճաբանական ասուլիսներեն և այլն, և առավելաբար՝ հայ թե օտար հին ու նոր ոահվիրա դեմքերու կողմե հրատարակված հոյակապ ստեղծագործություններեն. գ. սատարել կրթարանների ընթացավարտ՝ կարիքավոր երկսեռ պատանիներու ուսման ու դաստիարակչական գործին, մղելով ղանոնք օտար երկրորդական բարձրագույն վարժարաններու մեջ»[18]։

Բոլորովին ուրույն պայմաններում են գործում հայ մշակութային միությունները այն երկրներում, ուր հաղթանակել են դեմոկրատական կարգերը։ Դրա լավագույն ապացույցն է Բուլղարիան, որտեղ ահա արդեն քսանհինգ տարի է, ինչ գործում է Սովետական Հայաստանում և սփյուռքում լավ հայտնի «Երևան» մշակութային միությունը։ Սփյուռքում չկա որևէ մշակութային միություն, որի գործունեության հետ կապված բոլոր ծախսերը իր վրա վերցներ պետությունը[19]։ Քսանհինգ տարի է, ինչ այդ արտոնությունից օգտվում է «Երևան» միությունը Բուլղարիայի Ժողովրդական Հանրապետությունում։ Հենց դրանով է առաջին հերթին բացատրվում այն իրողությունը, որ «Երևան» մշակութային միությունը դարձել է հասարակական կյանքի, հայ մշակույթի, արվեստի ու գեղարվեստական ինքնագործունեության զարգացման իսկական կենտրոն, սիրված ու հարգված բուլղարահայ հասարակայնության կողմից։ Այժմ Բուլղարիայի 16 քաղաքներում միությունն ունի իր մասնաճյուղերը։ Մեծ ծառայություններ ունի «Երևան» միությունը հայ-բուլղարական վաղուց հաստատված եղբայրական կապերի հետագա ամրապնդման ու խորացման ուղղությամբ։ Բուլղարահայ գաղութի կյանքում մեծ իրադարձություն հանդիսացավ «Երևան» միության նախաձեռնությամբ 1967 թ. կազմակերպված բարեկամության գընացքը, որով Հայաստան ժամանեցին գեղարվեստական ինքնագործունեության խմբերի 500 անդամներ։ Խմբի կազմում էին Սոֆիայի «Երևան» երկսեռ երգչախումբը, Ռուսեի Կոմիտասի անվան երգչախումբը, Պլովդիվի Արամ Խաչատրյանի անվան երգչախումբը, Վառնայի և Շումենի երգի-պարի անսամբլները, Սոֆիայի և Վառնայի թատերախմբերը։ Տասնօրյակին մասնակցելու համար Հայաստան ժամանեց նաև Բուլղարիայի կուսակցական, կառավարական, հասարակական գործիչների, կուլտուրայի և արվեստի աշխատողների 25 հոգուց բաղկացած խումբը։ Այսպիսով Սովետական Հայաստանի հասարակայնությունը հնարավորություն ստացավ մոտիկից ծանոթանալու բուլղարահայ մշակույթի ու արվեստի գործիչների ստեղծած արժեքներին և չհիասթափվեց։ Ինքնագործ խմբերի ելույթները հաճախ հասնում էին իսկական պրոֆեսիոնալ մակարդակի։

Վերջես Սովետական Հայաստանի հասարակայնությունը նշեց «Երևան» միության բեղմնավոր գործունեության 25-ամյա հոբելյանը։ «Նոր կարգը, սոցիալ-տնտեսական նոր հարաբերությունները,— գրում է «Հայրենիքի ձայն» թերթը,— փոխեցին նաև նախկին հայ համայնքների կառուցվածքը, նրա աշխատանքի բնույթը։ Բուլղարիայի կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականությունը ապահովում է բոլոր փոքր ազգությունների պաշտպանությունը, իրավահավասարությունը, միաժամանակ պայմաններ է ստեղծում նոր տեսակի կազմակերպությունների լայն գործունեության»[20]։

«Երևան» մշակութային միության կենտրոնական վարչությունը, որի նախագահն է հայ գեներալ Գ. Գաբրիելովը, 1944 թ. հրատարակում է «Երևան» շաբաթաթերթը։ Մեծ են թերթի ծառայությունները բուլղարահայ գաղութի կյանքում, Բուլղարիայի Ժողովրդական Հանրապետության նվաճումները պրոպագանդելու, Բուլղարիայի և Սովետական Միության ու Սովետական Հայաստանի միջև եղբայրական բարեկամությունը ամրապնդելու և ընդլայնելու ասպարեզում։

18 «Տիգրան Երկաթ» հայ մշակութային միություն, Ալեքսանդրիա, 1950։

19 Տե՛ս «Սևան», 1969, 24 հոկտեմբերի։

20 «Հայրենիքի ձայն», 1970, 18 մարտի։

Սփյուռքում կան շատ այնպիսի կազմակերպություններ, որոնք թեև ուղղակի իմաստով մշակութային կազմակերպություններ չեն, սակայն իրենց գործունեության շատ կողմերով ունեն նաև մշակութային միությունների ֆունկցիաներ։ Դրանց շարքին է պատկանում հայ բարեգործական ընդհանուր միությունը։ Լինելով սփյուռքի ամենահարուստ ֆինանսական կազմակերպությունը և իր մեջ ընդգրկած ունենալով հազարավոր անդամներ, միությունը շնորհակալ աշխատանք է տանում հայկական դպրոցների, երիտասարդական կազմակերպությունների, հայկական ակումբների և ազգային այլ հաստատությունների պահպանման ասպարեզում։ Միությունը մեծապես օգնում է հայ արվեստի զարգացմանը, նյութապես օժանդակելով ու խրախուսելով շնորհալի արվեստագետներին[21]։ Միության 55-րդ համագումարի իր բացման ճառում միության նախագահ Ալեք Մանուկյանը, անդրադառնալով կրթական նպատակներին ուղղված միջոցառումներին, հայտարարեց. «Ունենք 4 երկրորդական վարժարան, 9 նախակրթարան և հայագիտական հիմնարկ մը, բարերար Երվանդ Հյուսիսյանի անունով։ Մեր սեփական այս հաստատություններեն զատ, ինչպես նախորդ տարիներուն, 1967-ին ևս լայն աջակցություն ընծայած ենք նաև զանազան կարգի ուրիշ կրթական հարկերու, թվով 95 հատ, նպաստյալ դպրոցներու անվան տակ, և ազգային դաստիարակության կենսական նպատակին համար ծախսված գումարը հանգած է 610811 դոլարի»[22]։ Զեկուցողը նշեց, որ «Կրթական գործեն անմիջապես վերջ մեր հոգածության առարկան ըրած ենք մշակութային բազմատեսակ ձեռնարկներ, խորապես համոզված ըլլալով, թե անոնք զորավոր ազդակներ են ազգապահպանման վեհ նպատակին ծառայող»[23]։

Սփյուռքահայ կյանքի պայմաններում հայ մշակույթի յուրահատուկ օջախներ են հանդիսանում հայ եկեղեցու արտասահմանյան թեմերի առաջնորդարանները, որոնք իշխանությունների առաջ իրավապես ներկայացնում են հայ համայնքի շահերը։ Այդպիսի օջախ են, մասնավորապես, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Հարավային Ամերիկայի եկեղեցական կենտրոնները, որոնք կազմակերպում ու իրականացնում են մշակութային զանազան միջոցառումներ, ունեն մշակութային, տիկնանց, երիտասարդական և այլ հանձնաժողովներ, հրատարակում են պարբերաթերթեր։

Անցնենք այժմ հայրենակցական միությունների գործունեությանը։

Դեռ վաղ ժամանակներից, երբ ճակատագրի բերումով հայերը թողնում էին հայրենի գյուղը, ավանը, քաղաքը և բնակություն հաստատում աշխարհի այլևայլ երկրներում, երբ տեղահանված հայության բեկորները գնալով ավելի ու ավելի սուր կերպով էին զգում հայրենիքի կարոտը, նրանք անհաղթահարելի պահանջ էին զգում ժամանակ առ ժամանակ ի մի հավաքվելու, իրենց ցավերից խոսելու, իրար օգնելու ու նեցուկ կանգնելու համար։ Եվ այսպես աշխարհի ամենահեռավոր անկյուններում կյանքի կոչվեցին հայրենակցական միությունները, դառնալով մայրենի լեզվի, մշակույթի, ազգային սովորույթների ու ավանդույթների պահպանման ու զարգացման կարևոր օջախներ։ Հայ ժողովրդի պատմության նորագույն շրջանում հայրենակցական միությունների դերը ու նշանակությունը սփյուռքում ավելի շեշտված բնույթ է ստանում, նրանց գործունեությունը դառնում է ավելի լայն ու բազմակողմանի։ Դա պայմանավորված էր մեծ եղեռնի պատճառած արհավիրքների հետևանքներին դիմագրավելու, ժողովրդական մեծ ողբերգությանը հաջորդած տարիներին աշխարհացրիվ հայության բեկորները փրկելու բնական ձգտումով։ Քսանական-երեսնական թվականներին հին ժամանակներից գոյություն ունեցող միությունների կողքին ծնունդ են առնում նոր միություններ, ավելի մեծ թվով անդամներով, ավելի նպատակասլաց գործունեությամբ։

Հայաստանում սովետական կարգերի հաստատումը նոր լիցք, նոր ուժ ու եռանդ հաղորդեց հայրենակցական միություններին։ Արևմտյան Հայաստանի ավերված քաղաքների բազմահազար հայ մարդիկ, որոնք բնակություն էին հաստատել աշխարհի բոլոր մայրցամաքների երկրներում, այժմ արդեն գիտեին, որ հայ ժողովուրդը իր պատմական հայրենիքի մի մասում վերականգնել է իր պետականությունը ու մեծագույն եռանդով ու կորովով կառուցվում է երկիրը։ Հայրենակցական միություններում համախմբված մարդիկ ժողովրդական առողջ բնազդի թելադրանքով կենսական պահանջ էին զգում կապեր հաստատելու հայրենիքի հետ, բարոյական ու նյութական ուժերով նպաստելու հայրենի երկրի վերաշինությանը։ Այդ ժամանակաշրջանում է, որ սկսվում է Արևմտյան Հայաստանի ավերված ավանների ու քաղաքների անունները կրող նոր բնակավայրերի կառուցումը Սովետական Հայաստանում։ Հետագա տարիներին Հայաս-

---

21 «Գործապատում Հ. Բ. Ը. Միության», Կալիֆորնիա, 1954։

22 «Զարթոնք», 1969, 24 հունվարի։

23 Նույն տեղում, տե՛ս նաև «Ընդհանուր տեղեկագրեր և հաշվեկշիռներ», Փարիզ, 1959։

տանի քարտեզի վրա սկսում են երևալ ժողովրդի պատմության հետ սերտորեն կապված, նրա համար թանկ ու նվիրական անուններ։ Իրանց կառուցմանն ու բարեկարգմանը իրենց համեստ մասնակցությունն են բերել սփյուռքահայ հայրենակցական միությունները[24]։ Սովետական Հայաստանի կառավարությունը, որը պլանավորված կարգով իրականացնում էր արտասահմանյան հայերի հայրենադարձությունը, հսկայական միջոցներ էր տրամադրում նոր ավանների կառուցմանը. նոր բնակավայրերում սկսվում էր արդյունաբերական ձեռնարկությունների, կուլտուր-լուսավորական ու կենցաղային սպասարկման հիմնարկների կառուցումը[25]։ Նոր Արաբկիր, Նոր Սեբաստիա, Նոր Կիլիկիա, Նոր Մարաշ, Նոր Զեյթուն, Նոր Արեշ, Նոր Բյութանիա, Նոր Մալաթիա, Նոր Հաճըն, Նոր Խարբերդ, Նոր Երզնկա, Նոր Գեղի ավանները դառնում են Հայաստանի և քաղաքամայր Երևանի անբաժանելի մասը և շուք ու գեղեցկություն տալիս մեր վերածնված հայրենիքին։

Համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին, ինչպես և ետպատերազմյան շրջանում սփյուռքահայ հայրենակցական միությունների ճնշող մասը կանգնած էր հայրենասիրական, Հայաստանի պաշտպանության դիրքերում։ Վերջին տասնամյակների ընթացքում, երբ աննախընթաց չափերով ընդլայնվել են մշակութային կապերը սփյուռքի և հայրենիքի միջև, հայրենակցական միությունները, հավատարիմ իրենց նպատակներին, շարունակում են իրենց ազգանվեր գործունեությունը։ Այժմ Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Լատինական Ամերիկայում, Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներում, Եվրոպայում, ուր գոյություն ունեն կազմակերպված հայ համայնքներ, հայրենակցական միությունները իրենց գործոն մասնակցությունն են բերում սփյուռքահայ հասարակական ու մշակութային կյանքին։ Մալաթիա հայրենակցական միությունը, համասեբաստահայ վերաշինաց միությունը, Հաճընի, Մարաշի, Արարկիրի և բազմաթիվ այլ միություններ իրենց բազմաբեղուն գործունեությամբ հայտնի են ամբողջ սփյուռքում։ Հայրենակցական միություններն ունեն իրենց կանոնադրությունը, ամեն տարի հրավիրում են պատգամավորական ժողովներ և անդամների առաջ հաշվետվություն են տալիս իրենց կատարած գործունեության մասին, ինչպես նաև բինարկում ապագայի հետ կապված ծրագրերը։ Այդ տեսակետից բնորոշ են Արաբկիր և համասեբաստահայ վերաշինաց միության տարեկան ժողովները։ Արաբկիր միության պատգամավորական վերջին ժողովը տեղի ունեցավ անցյալ տարվա մայիսին, Ֆիլադելֆիայում։ Ահա հակիրճ գծերով միության կողմից իրականացված ձեռնարկումները. օգնություն հին Արաբկիրի աղքատ ընտանիքներին, նյութական աջակցություն Ստամբուլի դպրեվանքին, Հալեպի Կիլիկյան վարժարաններում ուսանող արաբկիրցիներին։ Միաժամանակ միությունը որոշեց Նոր Արաբկիրի հագուստի մաքրման ֆաբրիկայի կարիքների համար նոր մեքենաներ ձեռք բերել 25 հազար դոլարի արժողությամբ, ինչպես նաև միության միջոցներով Նոր Արաբկիրում կառուցել մեծ լողարան, որի համար արդեն ստացված է Հայաստանի համապատասխան իշխանությունների համաձայնությունը[26]։

Համասեբաստահայ վերաշինաց միությունը 1967 թ. իրականացրել է հետևյալ միջոցառումները. նյութական օժանդակություն Բեյրութի, Ստամբուլի, Երուսաղեմի, Հալեպի դպրոցներին 4156 դոլար ընդհանուր դումարով։ Վարչության հաշվետվության մեջ նշվում է, որ միության անդամները, դրսևորելով իրենց հայրենասիրական զգացումները, գիտական զանազան նպատակների համար որոշ միջոցներ են տրամադրում Հայաստանի գիտությունների ակադեմիային[27]։

1958 թ. նոյեմբերի 4-ի հրամանագրով հիմնադրվեց Նոր Հաճըն ավանը։ Ավանի հիմնադրման տարելիցի առթիվ «Նոր Հաճըն» հայրենակցական միության կենտրոնական վարչության պաշտոնաթերթը գրել է. «Մեր հաճընցիության համար ավելի մեծ սփոփանքի խանդավառ պարգև, ավելի բարձրիմաստ նվեր դժվար թե կարելի ըլլար հուսալ։ Մայր Հայաստանի մեջ, այն էլ քաղաքամայր սիրուն Երևանեն հազիվ երկու տասնյակ կիլոմետր հեռավորության վրա Նոր Հաճըն քաղաքատիպ ավանի կառուցումը հայրենասիրական լայն ու խոր բավարարությամբ լեցուց բոլոր մաքուր ու զտարյուն սիրտերը և ավելի ուժ, կորով ու հավատք ներշնչեց՝ անվրդով ու հաստատակամ շարունակելու հայրենասիրական մեծ գործը, հայրենաշեն պայքարը»[28]։ Բացառիկ

24 Տե՛ս «Երիտասարդ Հայաստան», 1960, 5 հունվարի։

25 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 7, Երևան, 1967, էջ 575—576։

26 «Լրաբեր», 1969, 30 սեպտեմբերի։

27 «Լրաբեր», 1968, 27 ապրիլի և «Նոր Սեբաստիա» երկամյա տեղեկատու, 1969, հոկտեմբեր-նոյեմբեր, էջ 21—29։

28 «Նոր Հաճըն», 1959, նոյեմբեր-դեկտեմբեր։

խանդավառության պայմաններում, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի հրավերով, «Նոր Հաճըն» հայրենակցական միության մի խումբ հյուրեր մասնակցեցին ավանի հիմնադրման 10-րդ տարեդարձի առթիվ տեղի ունեցած հանդիսություններին և իրենց սեփական աչքերով տեսան, թե ընդամենը տասը տարվա ընթացքում ինչ հրաշալի ծաղկում է ապրել Նոր Հաճըն ավանը։

Մալաթիայի կրթասիրաց միությունը՝ հիմնադրված ավելի քան վաթսունհինգ տարի առաջ, մեծ փորձ է կուտակել կրթական, մշակութային ու հայրենասիրական այլ ձեռնարկումների կազմակերպման ուղղությամբ։ Միությունը մասնավորապես գործուն աջակցություն է ցույց տալիս Բեյրութի Թեքեյան և Սահակյան, Հալեպի Կիլիկյան և Մխիթարյան վարժարաններին, նաև Երուսաղեմի ու Ստամբուլի դպրևանքերին։ Սովետական Հայաստանում Նոր Մալաթիայի հիմնադրումը մեծ ոգևորություն առաջացրեց մալաթիացիների շրջանում։ Նոր Մալաթիան այժմ քառասուներեք տարեկան է։ Հիմնադրման ժամանակ, 1927 թ. կրթասիրաց միությունը, որը հետագայում կազմեց Մալաթիայի հայրենակցական միության հիմքը, որոշ գումար հատկացրեց ավանի կառուցման ու բարեկարգման նպատակին։ Այդ օրվանից տասնամյակներ են անցել։ Հայաստանի վերաշինությանը և բարգավաճմանը զուգընթաց աճել ու զարգացել է Նոր Մալաթիան։ Այն ժամանակ այստեղ բնակություն հաստատեց մալաթիացի քսաներկու ընտանիք։ Այժմ ավանում ապրում է հարյուր քսանից ավելի մալաթիացի ընտանիք։ Այստեղ կառուցվել է Լենինի անվան մետաքսագործական կոմբինատը, հյուսվածքեղենի ֆաբրիկան, ուր աշխատում են մոտ յոթ հազար բանվորներ։ Նոր Մալաթիայի դպրոցներում աշխատում է բարձրագույն կրթություն ունեցող հարյուր վաթսունհինգ ուսուցիչ, Նոր Մալաթիայից բարձրագույն կրթություն են ստացել քառասուն պատանի ու աղջիկ։ Հին Մալաթիայում չորս բժիշկ կար։ Այժմ միայն Մալաթիայի հիվանդանոցում ու բուժարանում ընդգրկված է մոտ չորսհարյուր բուժաշխատող, որոնցից յոթանասունը բժիշկներ են։ Ամերիկաբնակ մալաթիացիների շրջանում մեծ հետաքրքրություն առաջացրեց Մալաթիայի հիվանդանոցի գլխավոր բժիշկ Տ. Մանուշակյանի այցելությունը Ամերիկա, որն իր հրապարակային ելույթում դրվատանքի խոսքեր ասաց նաև կրթասիրաց ընկերության կողմից իրականացված հայրենասիրական գործերի մասին, մասնավորապես հիվանդանոցը արդիական սարքավորումներով հագեցնելու ուղղությամբ[29]։ «Նոր Մալաթիան,— գրում է միության օրգան «Նոր Մալաթիա» ամսագիրը,— կանգնեցավ Մայր հայրենիքի հողին վրա որպես ճարտարարվեստի, գյուղատնտեսության ու մշակութային բազմամարդ կենտրոն մը, շնորհիվ հայկական հանրապետության խնամված և լայն միջոցառումներին։ Անժխտելի է, որ նոր սերունդի հայեցի դաստիարակությամբ մենք պիտի կարողանանք ալ ավելի արժեքավոր գործերով սատարել Մայր հայրենիքի հզորության»[30]։ Այսպիսին է Նոր Մալաթիան, վերակենդանացած հին Մալաթիան, որը մեծ եղեռնի ժամանակ յոթ հազար զոհ տվեց։

Հնարավոր չէ մեկ հոդվածի շրջանակներում խոսել Երևանը գոտևորող կամ նրա շրջակայքում գտնվող բոլոր նորակառույց ավանների մասին, որից յուրաքանչյուրն ունի իր կենսագրությունը, իր մեծ ու փոքր գործերը, որոնք, սակայն, ունեն մի ընդհանուր իրար նմանվող կենսագրություն։ Այդ ընդհանրությունն այն է, որ նրանք բոլորն էլ ծնվել են մոխիրներից ու իրենցով նշանավորում են մեր ժողովրդի անմահությունը, հայրենիքը կառուցելու նրա աննկուն կամքն ու ոգին։ Իրենց արդի բարգավաճ վիճակով, իրենց վաղվա օրով նրանք ոգեշնչման աղբյուր են տարագիր հայության համար, կենդանի վկայությունը այն իրողության, որ սովետական կարգերի հաստատումը փրկարար նշանակություն ունեցավ ոչ միայն բնաշխարհի ժողովրդի համար, այլև սփյուռքահայ աշխատավորական զանգվածների համար։ Այդ գաղափարն է արտահայտված «Արարատ» թերթում հրապարակված հոդվածում, որը վերաբերում է Նոր Հաճընին։ «Իրապես ալ,— գրում է թերթը,— Հաճընո անկումը, ինչպես անկումը բովանդակ Կիլիկիո, կորսված ճակատամարտ մը եղավ ու կըմնա։ Եթե ընկավ Կիլիկյան Հաճընը, բայց կենդանի մնաց արծվաբույնին ոգին, որ այսօր ԼԹե ոչ Տավրոսի վրա, բայց հայկական լեռնաշխարհի մեկ ուրիշ մասին մեջ վերաշինած է իր բույնը, վերջնականապես և անսասանելիորեն։ Նոր Հաճընն է ան, Խորհրդային Հայաստանի պայծառ արևին տակ։ Վերածնված հայրենիքի որպես անբաժան մասնիկը, Նոր Հաճընն օրե օր հասակ կառնե ու կգեղեցկանա այսօր, որպես կենդանի կոթող իր նահատակներուն, որպես հաղթանակի կանչ իր պարտված դահիճին և որպես բարոյական խարան այն Արևմուտքին, որ խաչ ու ավետարանով օգնության հասնելե նոք զինք ձգեց մի-

29 Տե՛ս «Երիտասարդ Հայաստան», 1970, 16 հունվարի։

30 «Նոր Մալաթիա», 1965, № 1—2։

այնակ թշնամուն առջև, իվերջո անոր դաշնակիցը դառնալու և գործած ոճիրները ծածկելու»[31]։

Մեր օրերում, երբ սփյուռքում միշտ օրակարգի վրա է հայապահպանման կարևոր խնդիրը, մշակութային և հայրենակցական միությունները, որոնք ունեն իրենց պարբերական մամուլը, ակումբները և այլ հաստատություններ, շնորհակալ աշխատանք են կատարում սփյուռքահայությանը ձուլման վտանգից փրկելու, սփյուռքահայ դպրոցները, ակումբները, մամուլը և մշակույթի մյուս օջախները վառ պահելու ուղղությամբ։ Մշակութային միությունների գլխավոր հոգսերից մեկը հենց ամբողջ սփյուռքի առաջ ծառացած հայապահպանման խնդիրն է։ Իսկ դրա լուծման գլխավոր բանալին կապն է հայրենիքի հետ։ «Հայկականության ծաղկում և ազգապահպանում այսօր անըմբռնելի և գրեթե անկարելի ըլլալով առանց Մայր հայրենիքի հետ մշակութային և հոգեկան կապերու սերտացումին,— գրում է «Զարթոնք» թերթը,— տրամաբանական է անշուշտ, որ այս տարի բացառիկ ճիգ ընենք թափ տալու Մայր հայրենիք—հայ սփյուռք մշակութային հարաբերությանց զարգացումին՝ արվեստագետներու, մտավորականներու և գեղարվեստական խումբերու այցելություններով ու շրջապտույտներով։ Եվ կխորհինք, թե հայկական հանրապետության պանծալի հիսունամյակը, որ անկասկած ամեն տեղ պիտի նշվի մեծ հպարտությամբ ու խանդավառությամբ, ամենահարմար ժամանակամիջոցն է մշակութային հաղթարշավներու՝ մանավանդ հայ սփյուռքի ամբողջ տարածքին»[32]։

Ներկա հոդվածի շրջանակներում մենք հընարավորություն չունեցանք կանգ առնելու Սիրիայի, Ռումինիայի, Կանադայի, Ավստրալիայի և մյուս գաղթօջախների մշակութային կազմակերպությունների գործունեության վրա։

Մեր նշված բոլոր միությունները եղել են և մնում են կանգնած հայրենասիրական դիրքերի վրա։

* * *

Արտասահմանի հայությունը ըստ արժանվույն գնահատեց Սովետական Հայաստանի կառավարության որոշումը՝ սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտե ստեղծելու մասին, դրա մեջ տեսնելով սփյուռքը հայրենիքի հետ կապող կամուրջը ավելի ամուր, ավելի հաստատ դարձնելու, Հայաստանի, հայ ժողովրդի հոգևոր արժեքներին սփյուռքահայությանը ավելի լայն շափերով ծանոթացնելու նոր վկայությունը։ Դժվար է մի առ մի թվարկել այն բոլոր կարևորագույն միջոցառումները, որոնք իրականացվել են կոմիտեի ստեղծումից հետո։ Սփյուռքահայ երաժիշտ կատարողների ելույթները Հայաստանում, նկարիչների ցուցահանդեսների կազմակերպումը, հասարակական անվանի գործիչների, գրողների, գիտնականների պարբերական այցելությունները, ուսուցիչների ու երեխաների խմբերի ամենամյա հրավիրումը լիցք ու եռանդ են տալիս սփյուռքահայ աշխատավորությանն ու մտավորականությանը։ Նույնպիսի կարևոր նշանակություն ունեն Սովետական Հայաստանի համերգային կոլեկտիվների ելույթները արտասահմանի հայաշատ կենտրոններում, հայ գրողների, գիտնականների, պետական ու հասարակական գործիչների այցելություններն ու ելույթները հայ գաղթօջախներում։ Ավելորդ է ասել, թե որքան կարևոր նշանակություն են ունենում դրանք մշակութային ու հայրենակցական միությունների գործունեությունը ավելի նպատակասլաց ու արդասավոր դարձնելու գործում։

Կասկած չի կարող լինել, որ առաջիկա տարիների ընթացքում սփյուռքահայ մշակութային և հայրենակցական միությունները ավելի սերտ կապերով կկապվեն հայրենիքի հետ, որ նրանք սփյուռքահայությանը և մեզ, բնաշխարհի մարդկանց կուրախացնեն իրենց նոր, ավելի նշանակալի գործերով։

Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ

---

31 «Արարատ», 1964, 8 նոյեմբերի։

32 «Զարթոնք», 1970, 8 հունվարի։